

# ՀնարԳափոր Լճանոր և Սա—րբ ԾՆո—նդ

# Գիտություն

ԴԵԿՏԵՄԲԵՐ

№ 12

(336)

2019 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

## ԱՄՆ-ի Սենատի Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևը

Արդարության և ճշմարտության հաղթանակն է, վճռական քայլ արդարությանը ծառայելու ճանապարհին

ԱՄՆ-ի Սենատը միաձայն ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձևը: Սենատորներ Ռոբերտ Մենենդեսի (դեմոկրատ, Նյու Ջերսի) և Թեդ Բրուզի (համրապետական, Տեխաս) հեղինակած թիվ 150 բանաձևի ընդունումը հաջորդում է Ներկայացուցիչների պալատի թիվ 296 բանաձևի ընդունմանը: Դեկտեմբերի 12-ի հստակ դիրքորոշմամբ ԱՄՆ-ի Սենատն առաջին անգամ ճանաչեց ու դատապարտեց 20-րդ դարասկզբի մեծագույն ոճիրը:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը «Twitter»-ի իր էջում անդրադարձել է ԱՄՆ-ի Սենատի կողմից երկն Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևի ընդունմանը: «ԱՄՆ-ի Սենատի 150 բանաձևը արդարության և ճշմարտության հաղթանակն է: Ամբողջ աշխարհի հայ ժողովրդի անունից ես խորը երախտագիտություն եմ հայտնում Սենատին այս նշանակալի օրհների համար: Սա հիշատակի տուրք է 20-րդ դարի առաջին ցեղասպանության 1,5 միլիոն զոհերին և համարձակ քայլ՝ ցեղասպանության կանխման ծրագրի առաջընթացում: «Այլևս երբեք», - «Արմենիայի» տեղեկացմամբ՝ գրել է ՀՀ վարչապետը «Twitter»-ում:

Հայոց ցեղասպանության մասին երկկուսակցական բանաձևը, մասնավորապես, սահմանում է.

1) ոգեկոչել Հայոց ցեղասպանությունը պաշտոնական ճանաչման և հիշատակման միջոցով,

2) մերժել Հայոց ցեղասպանությունը կամ ցանկացած այլ ցեղասպանություն ժխտելու գործին Միացյալ Նահանգների կառավարությանը ներգրավելու ջանքերը,

3) խրախուսել Հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստերի համարյանցումն ու ուսուցանումը՝ հաշվի առնելով Միացյալ Նահանգների դերը մարդասիրական աջակցություն ցույց տալու ջանքերում և Հայոց ցեղասպանության արդիականությունը մարդկության դեմ կատարվող մերօրյա հանցագործությունների համատեքստում:

ՀՀ արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանն իր հերթին արձագանքել է ԱՄՆ Սենատի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևի ընդունմանը. «ԱՄՆ-ի Սենատի կողմից 150 բանաձևի միաձայն ընդունումը վճռորոշ քայլ է՝ ծառայելու արդարությանը, ճշմարտությանը և Հայոց ցեղասպանության ճանաչմանը, այն հարգանքի տուրք է զոհերի հիշատակին և նրանց արժանապատվությանը: Շնորհակալություն եմ հայտնում սենատորներ Ռոբերտ Մենենդեսին, Թեդ Բրուզին և ԱՄՆ-ի Սենատի բոլոր անդամներին»:

Ամերիկայի հայկական համագումարը և ողջունել է Սենատի կողմից Հայոց ցեղասպանության մասին S.Res. 150 բանաձևի ընդունումը: «Ամերիկայի հայկական համագումարը գովաբանում է սենատորներ Ռոբերտ Մենենդեսին և Թեդ Բրուզին, որոնք շարունակել են անվախ և համառորեն առաջ շարժվել՝ ապահովելու S.Res. 150 բանաձևի միաձայն ընդունումը, որն անմիջականորեն հաստատում է Հայոց ցեղասպանության արձանագրումը ԱՄՆ-ի կողմից, խրախուսում է ցեղասպանության մասին ուսուցանումը և պայքարում է ժխտողականության դեմ», - հայտարարել է համագումարի գործադիր տնօրեն Բրայան Արդունին:

Նորայր ՄՈՎՍԻՍՅԱՆ

## ԵՐԳ ՏԱՐԵՄՈՒՏԻ

Թողած մայթերի բազությունն այսօր,  
Թողած տոնական լույսերը բոսոր  
Ու քաղաքն արթուն,  
Իմ սրտում՝ գարուն, շուրթերիս՝ երգեր  
Այս տարեմուտին քո գիրկն եմ եկել,  
Հայրենի իմ տուն:  
Քո գիրկն եմ եկել ես նրա համար,  
Որ քեզից բացի աշխարհում արար  
Այլ օջախ չունեմ,  
Քո գիրկն եմ եկել բուք ու բորանին,  
Քո գիրկն եմ եկել, որ այս Նոր տարին  
Քեզ հետ ողջունեմ...  
Կարոտած սրտով երկար համբերել,  
Ուսերիս վրա ես ծյուն եմ բերել  
Կապույտ Սևանից,  
Եկել եմ հեռվից, որ այս երեկո  
Սիրտս արբենա մայրական ձեռքով  
Բացած սեղանից:

Թող հայրենական ծխի պես բարի,  
Ծխի պես ոլոր խոսքը երկարի  
Մեր տան դուռը բաց,  
Թող խինդից ինձ պես եղևին դողա,  
Բաժակների մեջ լույսերն այս շողան  
Մինչև լուսաբաց:  
Թող ընդունիչը սրտերը գերի  
Ու հեռվից մարող մրմունջը բերի  
Մեր Կոմիտասի,  
Իսկ հա՛յրս, հա՛յրս բաժակը առած՝  
Մի քիչ էլ խորհի անցած-գնացած  
Օրերի մասին:  
Դրսում ծնե՞մ է, երկինքը վերից  
Ծաղկաթերթի պես փաթիլներն անքիծ  
Մաղում է անվերջ,  
Ա՛խ, ինչքան լավ է Նոր տարին տեսնել,  
Հայրական բարի մաղթանքը լսել  
Հայրենի տան մեջ:

## Նոր ավյալներ Երկրի մագնիսական դաշտի մասին

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը և Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի գեոֆիզիկական կենտրոնի տնօրեն, ՌԳԱ թղթակից անդամ Անատոլի Սոլովյովը օրերս այցելեցին ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ գյուղում գտնվող Երկրի մագնիսական դաշտի մշտադիտարկում իրականացնող փորձարարական բազա: Փորձարարական բազան ստեղծվել է ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի և Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի գեոֆիզիկական կենտրոնի համագործակցության արդյունքում:

Այցի ընթացքում քննարկվեցին համագործակցության նոր ծրագրեր, որոնք մոտ չորսնում կներկայացվեն 2 երկրների պետական լիազոր մարմիններին:

Փորձարարական բազայում, որը կառուցված է բացառապես մագնիսական հատկություններ չունեցող կոմպոզիցիոն նյութերից և մագնիսական դաշտ չունեցող փայտից, տեղադրված է սարքավորում, որն իրականացնում է Երկրի մագնիսական դաշտի փոփոխությունների գերզգայուն ճշգրիտ չափումներ: Դրանց շնորհիվ հնարավոր է բացահայտել և հաստատել Երկրի մագնիսական դաշտի (Real-time) փոփոխությունների և երկրաշարժի նախապատրաստման միջև պատճառահետևանքային կապերը որպես հնարավոր երկրաշարժի առաջացման նախանշան՝ հետազայում լուծելու երկրաշարժի կանխագուշակման հիմնարար պրոբլեմը:

Ստացված արդյունքները համալրում են միջազգային տվյալների բազան՝ հետագա մշակման, նոր խնդիրների ձևավորման համար:



ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

## Հայ գիտնականները մասնակցել են գամմա - բռնկումից գերբարձր էներգիաների ֆոտոնների գրանցման աշխատանքներին


«MAGIC» պատկերային մթնոլորտային չերենկոպյան դիտակների համակարգը առաջին անգամ գամմա-բռնկումից (Gamma-ray Bursts) գրանցել է գերբարձր էներգիաների ֆոտոններ: Գամմա-բռնկումները կարճատև հզոր ճառագայթման աղբյուրներ են, որոնք առաջանում են հեռավոր գալակտիկաներում մեծ զանգվածով աստղերի պայթյունից կամ նեյտրոնային աստղերի միաձուլումից: Այս գրանցումը բոլորովին նոր պատկերացում է տալիս գամմա-բռնկումներում տեղի ունեցող ֆիզիկական պրոցեսների մասին, որոնք առայժմ անհայտ են: Հետազոտության արդյունքները երկու հոդվածների տեսքով հրապարակվել են հեղինակավոր «Nature» ամսագրում: «Nature» ամսագրում տպագրվում են ժամանակակից ամենակարևոր գիտական հետազոտությունների և հայտնագործությունների վերաբերյալ հոդվածներ, ամսագիր, որի 2018թ. ազդեցության գործակիցը կազմում է 43.1:

2019 թ. հունվարի 14-ին GRB 190114C գամմա-բռնկման առաջացումից 50 վայրկյան անց այն ուսումնասիրվել է «MAGIC» համագործակցության Լա Պալմայում տեղադրված երկու 17 մետրանոց պատկերային մթնոլորտային չերենկոպյան դիտակներով: Առաջին տասնյակ վայրկյանների ընթացքում գրանցված տվյալների մշակման արդյունքները ցույց են տալիս, որ գրանցված ֆոտոնների էներգիան հասնում է տեռաէլեկտրոն-վոլտի (ՏԷՎ), այսինքն, նրանց էներգիան գերազանցում է տեսանելի լույսի ֆոտոնների էներգիան տրիլիոն անգամ:

Ների էներգիան տրիլիոն անգամ: Այդ ժամանակահատվածում GRB 190114C-ից ճառագայթած ֆոտոնների լուսատվությունը 100 անգամ գերազանցում էր ՏԷՎ տիրույթում գրանցված ամենապայծառ աղբյուրի խեցգետնաձև միգամածության լուսատվությանը, ինչի հետևանքով GRB 190114C գամմա-բռնկումը դառնում է ՏԷՎ տիրույթում ֆոտոնների ճառագայթման ռեկորդային պայծառ աղբյուր:

Առաջին անգամ «MAGIC» համագործակցության կողմից GRB 190114C գամմա-բռնկումից ՏԷՎ ֆոտոնների գրանցումից հետո այն մանրամասն ուսումնասիրվել է տասնյակ դիտակներով, ինչի արդյունքում ստացվել է նրա ճառագայթման ամբողջական պատկերը ռադիոյից մինչև ՏԷՎ էներգետիկ տիրույթներում: Օպտիկական տիրույթում ուսումնասիրությունները թույլ են տվել պարզել, որ այս գամմա-բռնկումը առաջացել է գալակտիկայում, որից լույսը մեզ է հասնում 4.5 միլիարդ տարվա ընթացքում:

«MAGIC» միջազգային համագործակցության լիիրավ անդամ են ՀՀ ԳԱԱ ԻԿՐԱՆԵՏ կենտրոն միջազգային կազմակերպությունը և Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիան: «MAGIC» միջազգային համագործակցության տարեկան գիտաժողովը տեղի է ունեցել Երևանում սույն թվականի հունիսի 24-ից 28-ը:



ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐԸ

## «ԿՈՄԻՏԱՍ - 150» ԳԻՏԱԿԱՆ ՆԱՏԱՇԵՐՋԱՆԵՆ ՈՒ ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆԻ «ԿՈՄԻՏԱՍԸ ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԵՎ ՔԱՆԴԱԿԱԳԻՏՈՐՆԵՐԻ ԱԶԳԵՐՈՎ» ԴԱՏԿԵՐԱԳԻՐՔԸ

2019թ. սեպտեմբերի 26-ին լրացավ Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանը, և ողջ 2019 թվականը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի համար անցավ կոմիտասյան նշանաբանով:

Հոբելյանական միջոցառումների եզրափակիչ ակորդը դարձավ ինստիտուտի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ համատեղ, ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ նոյեմբերի 29-30-ը գումարված «ԿՈՄԻՏԱՍ-150» գիտական նստաշրջանը: Հայաստանի Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ գումարվեց գիտական նստաշրջան, որի բոլոր զեկուցումների առանցքում բացառապես Կոմիտասի կյանքն ու գործունեությունն էր, ինչպես նաև նրա կերպարը հայ արվեստում և գրականության մեջ:

Հայտնի է, որ Կոմիտասի կերպարին են անդրադարձել հայ նկարիչներից ու քանդակագործներից շատերը, կերպարվեստի տարբեր տեսակներում ու ժանրերում, թե՛ իր կենդանության օրոք, թե՛ հետագայում: Հենց այս թեմայի լուսաբանման է նվիրված ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի՝ «Կոմիտաս-150» գիտական նստաշրջանին ընդառաջ լույս տեսած «Կոմիտասը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով (կոմպոզիտորի ծննդյան 150-ամյակի առթիվ)» եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) աշխատությունը, որտեղ հայ արվեստաբանության մեջ առաջին անգամ համակողմանիորեն ուսումնասիրվել ու լայնորեն ներկայացվել է Կոմիտասի կերպարը հայ նկարիչների և քանդակագործների ստեղծագործության մեջ:

Ա. Աղասյանը հանգամանորեն քննության է առել Կոմիտասի ժամանակակիցների ու բարեկամների՝ Գևորգ Բաշինջաղյանի, Փանոս Թերլեմեզյանի և Եղիշե Թադևոսյանի կտավները, հետագայում կոմիտասականը հարստացրած Մարտիրոս Սարյանի, Գևորգ Գրիգորյանի (Ջուտտո), Երվանդ Քոչարի, Դմիտրի Նալբանդյանի, Հրաչյա Ռուխլայանի, Հովհաննես Ջարդարյանի, Հակոբ Հակոբյանի, Սուրեն Սաֆարյանի, Գրիգոր Խանջյանի, Սարգիս Մուրադյանի, Հենրի Էլիբեկյանի, Ռուդոլֆ Խաչատրյանի և Էլի շատ-շատերի զեղանկարչական ու գրաֆիկական ստեղծագործությու-

յունները, ինչպես նաև քանդակագործներ Երվանդ Քոչարի, Արա Սարգսյանի, Նիկողոս Նիկողոսյանի, Սերգեյ Բաղդասարյանի, Խաչատուր Իսկանդարյանի, Ղուկաս Չուբարյանի, Արա Հարությունյանի, Արտաշես Հովսեփյանի, Արտո Չաքմաքչյանի, Լևոն Թոքմաչյանի, Դավիթ Երևանցու և այլոց աշխատանքները, որոնք գտնվում են ինչպես Երևանում, այնպես էլ Էջմիածնում, Փարիզում, Դետրոյթում, Քվեբեկում և Սանկտ Պետերբուրգում:

Պատկերագրքում ներկայացված ստեղծագործություններն ունեն ինչպես զեղարվեստական ակնհայտ արժանիքներ, այնպես էլ պատմամշակութային և վավերագրական նշանակություն: Գրքի պատասխանատու խմբագիրն է ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը: Նա էլ հեղինակել է ա-

նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին արվեստի ինստիտուտի, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, պատմության ինստիտուտի, Մատենադարանի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Երևանի պետական համալսարանի գիտնականներն ու դասախոսները:

Լիազույնար միստում Աննա Ասատրյանը ներկայացրեց «Կոմիտասը և հայ երաժշտության հետագա ընթացքը» բանախոսությունը, իսկ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Ս. Ասողիկ աբեղա Կարապետյանը հանդես եկավ «Սուրբ Էջմիածնի վարդապետը» զեկուցմամբ: Գրականագետներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժա-

ներ «Կոմիտաս-եկեղեցի» առնչությունների շուրջ» զեկուցմամբ, իսկ Մարիաննա Տիգրանյանի (արվ. թեկն., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ) զեկուցումը նվիրված էր երկու վարդապետներին՝ Կոմիտասին և Սահակ Ամատունուն:

Անդրադարձ արվեց Կոմիտասի ֆուլկլորագիտական գործունեությանը և՛ Տաթևիկ Շախկուլյանը (արվ. թեկն., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ) լուսաբանեց «Կոմիտասը և «Սասնա ծռեր» էպոսի երգերը» թեման, իսկ Անի Հակոբյանը (ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ) քննության առավ Կոմիտասի գրառած օրոքները:

Առանձին խումբ կազմեցին ժամանակակից երաժշտության մեջ Կոմիտասի ստեղծագործության արձագանքներին նվիրված հետազոտությունները: Աննա Արևշատյանը (արվ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ) քննության



առաջաբանը:

«Կոմիտաս-150» նստաշրջանի բացումն ու լիազույնար միստը տեղի ունեցան նոյեմբերի 29-ին ԳԱԱ մախագահության միստերի դահլիճում: Բացման խոսքով հանդես եկավ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը:

Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը հաղորդեց Մայր Աթոռի Կոմիտաս Վարդապետի և Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակներին նվիրված միջոցառումների կազմակերպման հանձնախմբի ատենապետ, «Կոմիտաս» մեմագրության հեղինակ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեորգյանի Ս. Անուշավան Եպիսկոպոս ժամկցանը:

Գիտության կոմիտեի մախագահ Սամվել Հարությունյանի ողջույնի խոսքը ներկայացրեց կոմիտեի գլխավոր քարտուղար, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Լևոն Մարդոյանը: Իր ելույթում նա ընդգծեց նստաշրջանի կազմակերպիչներ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նշանակությունը Կոմիտասի կայացման մեջ և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ներդրումը կոմիտասագիտության զարգացման գործում, նաև գոհունակություն հայտնեց նստաշրջանին տարբեր գիտական կազմակերպությունների ու բուհերի ներկայացուցիչների մասնակցության կապակցությամբ:

կան համալսարանի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անիտա Դուխանյանն անդրադարձավ ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Մակլերի և Կոմիտասի, իսկ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր Վարդան Դևրիկյանը՝ Կոմիտասի և Մանուկ Աբեղյանի մարդկային և ստեղծագործական առնչություններին:

Այնուհետև գիտական նստաշրջանի մյուս երեք միստերը շարունակվեցին Արզականում՝ ՀՀ ԳԱԱ գիտաժողովների տանը:

Երաժշտագիտական զեկուցումներում քննության առնվեցին Կոմիտասի գիտական գործունեության առանձին ուղղությունները: Լիլիթ Երնջակյանը (արվ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ) ներկայացրեց «Կոմիտասը և հայ աշուղական երգարվեստը» զեկուցումը, Սիեր Նավոյանը (արվ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ) անդրադարձավ Կոմիտասի երաժշտատեսական հայացքներին, իսկ Արուսյակ Թամրազյանը (արվ. թեկն., Մատենադարան)՝ Կոմիտասի՝ հայ միջնադարյան հոգևոր ժառանգության ուսումնասիրություններին:

Շարունակելով հայ հոգևոր երաժշտության թեման՝ Լուսինե Սահակյանը (արվ. թեկն., դոցենտ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա) հանդես եկավ «Որոշ դիտարկում-

առավ Տիգրան Մանսուրյանի Կոմիտասին և Հայոց ցեղասպանությանը նվիրված ստեղծագործությունները, իսկ Աննա Ասատրյանը ներկայացրեց «Կոմիտասը Հովհաննես Չեքիջյանի գնահատմամբ և մեկնաբանմամբ» զեկուցումը:

Գրականագիտական զեկուցումներում ուսումնասիրության առարկան Կոմիտասի գրական ժառանգությունն էր: Արդա Մարանջյանի (բան. գիտ. թեկն., Մոսկվա) զեկուցումը նվիրված էր Կոմիտասի բանաստեղծությունների ուսումնասիրությանը, իսկ Եվա Մնացականյանը (բան. գիտ. թեկն., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ) անդրադարձավ Կոմիտասի մանկական:

Անուշավան Զաքարյանը (բան. գիտ. դ., «Պատմաբանասիրական հանդես») լուսաբանեց ռուս կոմպոզիտոր Թոմաս Հարտմանի դերը Թիֆլիսում «Կոմիտասի անվան ընկերության» ստեղծման գործում, իսկ Սուսաննա Հովհաննիսյանը (բան. գիտ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ) հանդես եկավ «Կոմիտասը թումանյանական վավերագրերում» զեկուցումով: Արմեն Կարապետյանը (պատմ. գիտ. թեկն., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ) ներկայացրեց «Կոմիտաս-Սևակ. ժողովրդի ողբերգությունը որպես անձնական ճակատագիր» բանախոսությունը:

Արվեստաբան Հռիփսիմե Վարդանյանը (արվ. թեկն., Երևանի պետական համալսարան) անդրադարձ կատարեց Կոմիտասի կերպարին Ռուդոլֆ Խաչատրյանի արվեստում:

Գիտական նստաշրջանի ավարտին՝ նոյեմբերի 30-ին, տեղի ունեցավ Արարատ Աղասյանի «Կոմիտասը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով» պատկերագրի շնորհանդեսը:

Գիտական նստաշրջանը եզրափակվեց դեկտեմբերի 1-ին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հոբելյանական համերգով, որին մասնակցեցին Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը և Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը Հովհաննես Չեքիջյանի և Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ:

**Աննա ԱՍԱՏՐՅԱՆ**  
**ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր**

# ՌՌԻՍ ԱՆՎԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԸ ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՍԻՆ

Կոմիտասի 150-ամյա հոբելյանը նշանավորվեց նրա մասին պատմող նոր գրքերով, հոդվածներով ու հանդիսություններով: Այդ համընդհանուր երախտագիտական դրսևորումների մեջ ուշագրավ մի երևույթ է օրերս լույս տեսած Անուշավան Զաքարյանի «Ռուս կոմպոզիտոր Թոմաս Հարտմանը և Կոմիտասը» գիրքը, որը նույն հայերեն նյութը կրկնում է նաև ռուսերենով: Սա խիստ շահեկան է. այն յուրօրինակ նվեր է ոչ միայն հայ ընթերցողին, այլև՝ ռուս: Բացի այդ, որոշակի արժեք է ունենում նաև համայնքի համար՝ այն առավել հևարավորություն է ընձեռում մեր նոր սերնդի մեջ թուլացող ռուսաց լեզվի իմացությունը խորացնելու և միաժամանակ մշակութային նոր գիտելիքներ ստանալու խնդրում:

Թոմաս Հարտմանը՝ (1885-1956) ռուս երաժշտական արվեստի ներկայացուցիչը, որը կոմպոզիտոր էր, երաժշտության տեսաբան, հիացած է Կոմիտասի արվեստով: Հարտմանի «Ավան ծաղիկ» բալետը բեմադրել է Պետերբուրգի Մարինյան թատրոնը, որը բալետի գծով ցարդ առաջատար է ողջ աշխարհում:

Հարտմանը ստեղծագործել է մի ժամանակահատվածում, երբ արվեստի ու գրականության մեջ ավանգարդիստական երևույթները դառնում են առաջատար: Նրա համար առաջնակարգ կոմպոզիտորներ էին Կլոդ Դեբյուսին ու Մորիս Ռավելը, իսկ նկարչության մեջ՝ Ֆրանսիացի իմպրեսիոնիստները: 1917-ի ռուսական հեղափոխությունը, ի թիվս այլ ռուս մտավորականների, Հարտմանին (նա ծագումով գերմանացի էր) բերում է Թիֆլիս, ուր հայկական մտավոր կյանքը Հովհաննես Թումանյանի գլխավորությամբ վերելք ուներ:

Թիֆլիսում Հարտմանը մոտիկից ծանոթանում է Կոմիտասի ստեղծագործություններին, որոնք նրա մտավոր զանգվածում գյուտի արժեք են ստանում, և ակնհայտ ոգևորությամբ «Закавказское слово» թերթի 1919

թվականի փետրվարի 28-ի և մարտի 1-ի համարներում լույս է տեսնում «Կոմիտաս վարդապետ» մեծածավալ հոդվածը՝ բաղկացած երկու մասից: Այն իր դիտարկումներով ու գնահատականներով մշտապես հետաքրքիր է կոմիտասագետների համար:

Հոդվածի շարունակությունը դառնում է Հարտմանի գործնական քայլը՝ «Կոմիտասի անվան ընկերության» ստեղծումը, որը զբաղվում է նաև համաճարտի հայի առողջական խնդիրներին նյութական ու բարոյական աջակցություն ցուցաբերելու լրջագույն գործով:


Ինչպես նկատում է Ա. Զաքարյանը, «Կոմիտաս վարդապետ» հոդվածից ակնհայտ է դառնում՝ Թ. Հարտմանը քաջատեղյակ է նաև հայ ժողովրդի պատմության ծալքերին, մասնավորապես ժողովրդի կյանքում հայոց եկեղեցու ունեցած կարևոր դերին» (էջ 33):

Հարտմանի՝ Կոմիտասին նվիրված հոդվածները ռուսերենից հայերեն է թարգմանել օրիորդ Մարգարիտ Բաբայանը՝ Արշակ Չոպանյանի «Ամահիտ» հանդեսի էջերում տպագրվելու համար: Այդ թարգմանությունը գետնից էր ապաստան գրքի հավելված: Այն խիստ կարևոր է, որովհետև թարգմանության

տողատակերում Մ.Բաբայանը Հարտմանի հաղորդած որոշ փաստերի առթիվ կատարում է ճշգրտումներ: Օրինակ՝ ըստ Հարտմանի Թումանյանը Կոմիտասի խնդրանքով «Անուշ» պոեմը վերածել է օպերայի լիբրետոյի, մինչդեռ Թումանյանը չի կատարել նրա խնդրանքը, և Կոմիտասը ստեղծել է միայն օպերայի որոշ մեներգերի երաժշտությունը:

Հարտմանի հոդվածից իմանում ենք, որ 1914-ին Փարիզի Համաշխարհային երաժշտական համագումարին մասնակցելու ժամանակ Կոմիտասի հաջողությանը նպաստել են Կլոդ Դեբյուսին, ամմահ «ժան Քրիստոֆ» վեպի հեղինակ Ռոմեն Ռոլանը և Դեբյուսիի կենսագիր, Ֆրանսիացի նշանավոր երաժշտության քննադատ Լուի Լալուան (էջ 103): Տողատակում Մ. Բաբայանն ավելացնում է, թե Փարիզի հայկական եկեղեցում Կոմիտասը հանդես է եկել դասախոսությամբ, նաև երգել է ու նվագել սրինգի վրա: Այդ ելույթն այնքան ներգործող է եղել, որ համագումարին եկած օտար ու ֆրանսիացի նշանավոր երաժիշտները հետագայում զմայլանքով էին հիշում այդ ելույթը: Համեստ Կոմիտասին հրճվածք է պատճառել ոչ թե սեփական անձի հաջողությունը, այլ իր տոհմիկ երաժշտության հանրահայտ դառնալը: Միջազգային համագումարի ժամանակ ունեցած հաջողությունը նրա մեջ ծնում է թանկ երազանք՝ Պոլսում բացել հայկական երաժշտության կոնսերվատորիա:

XX դարասկզբին հատուկ ուշադրություն կար ժողովրդական երգը դեպի դասական երաժշտություն բերելու կարևոր խնդրում: Ռուս հանրահայտ երաժշտական արվեստի տեսաբան Տա-



մենը համոզված էր, որ ռուսական ժողովրդական երգերը պետք է ծայն առ ծայն ոճով մշակել: Հարտմանի կարծիքով՝ «Համաճարտի Կոմիտասը նախազգայության ուժով գործադրեց այդ ոճը և այնպիսի կատարելությամբ, որ հազիվ իր արևմտյան արվեստակիցներից մինը կարողանար իրագործել... Ո՛վ նրանից լավ կարող էր պաշտպանել ժողովրդական երգի հոգին» (էջ 101):

Հարտմանը, լինելով իմպրեսիոնիստ կոմպոզիտոր, Կոմիտասի «Անտունին» գնահատում է որպես իմպրեսիոնիզմի հրաշալիք: «Անտունին» անման երգը՝ երաժշտական տպավորականության սքանչելի մի գործ», - գրում է նա (էջ 101):

Ա. Զաքարյանը մեզանում XIX դարավերջի և XX դարասկզբի հայ-ռուսական մշակութային ու գրական կապերի նվիրյալ մասնագետ է, և նրա այս ձեռնարկն ունի ակնհայտ ճանաչողական արժեք:

Անիտա ԴՈՒՆԻԱՆՅԱՆ

## ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում անցկացվեց միջազգային գիտաժողով «Հայաստան-Լեհաստան՝ պատմություն և արդիականություն» թեմայով

Սույն թվականի նոյեմբերի 22-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում անցկացվեց «Հայաստան-Լեհաստան՝ պատմություն և արդիականություն» թեմայով միջազգային գիտաժողովը: «Գիտաժողովը նվիրված էր մեր երկու երկրների, ժողովուրդների պատմական և ժամանակակից կապերին: Մեզ համար շատ կարևոր է ունենալ գիտական կապեր Լեհաստանի հետ», - իր ողջույնի ելույթում ասաց ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը: Նա մշեց, որ սա համատեղ 2-րդ գիտաժողովն է Երևանում: Առաջին գիտաժողովի արդյունքն է եղել Վարչապետի հայ-լեհական համատեղ ժողովածուի հրատարակումը, որն ամբողջապես ձևավորվել է պատմության, իրավունքի և քաղաքագի-



տության ամենատարբեր խնդիրների: «Մենք որոշել ենք այդ ժողովածուն դարձնել շարունակական գիտական հրատարակություն: Հաջորդը լույս կտեսնի եկող տարի՝ Երևանում», - ասաց Ռուբեն Սաֆրաստյանը:

ՀՀ-ում Լեհաստանի դեսպանի խորհրդական Մարեկ Ռեժուտան մշեց, որ Լեհաստանը կարևորում է Հայաս-

տանի հետ կապերի խորացումը: Այս օրերին Հայաստանում է Լեհաստանի արտաքին գործերի նախարարության պատվիրակությունը: Լեհաստանը նախատեսում է իրականացնել Հայաստանին օգնության և աջակցության երկարաժամկետ ծրագիր 2021-2026 թթ. համար, այդ նպատակով Լեհաստանի պատվիրակությո-

յունն այս օրերին շատ հանդիպումներ է ունենում: «Մեզ համար շատ կարևոր է այս գիտաժողովի իրականացումը, քանի որ մենք ուզում ենք ակտիվացնել հայ-լեհական հարաբերությունները տարբեր ուղղություններով, այդ թվում՝ գիտական: Հույս ունենք, որ գիտաժողովի ընթացքում կնախաձեռվեն նորանոր հետազոտություններ:

րի քայլեր: Մեզ համար շատ կարևոր է նաև ուսանողների, դասախոսների փոխանակումը», - ասաց ՀՀ-ում Լեհաստանի դեսպանի խորհրդական Մարեկ Ռեժուտան:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին նաև Վարչապետի համալսարանի դոկտոր Յարոսլավ Տուրուկովսկին և ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մինասյանը:

Հայ և Լեհ մասնագետները հանդես եկան 13 զեկուցումներով՝ նվիրված 20-21-րդ դարերում հայ-լեհական հարաբերություններին, Լեհաստանում հայերի գործունեությանը, օրենսդրական բարեփոխումներին և այլն:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

# ՄԻԼՎԱ ԿԱԳՈՒՏԻԿՅԱՆ-100

Վերջերս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում շուքով նշվեց Սիլվա Կապուտիկյանի ծննդյան 100-ամյակը: Ուրախացա և շատ զարմացա: Իսկ ինչու մենք՝ ողջ հայ ժողովուրդը, ոչ միայն չենք այդ կարևոր հոբելյանը, այլև ամբողջ տարին նույնիսկ չի չեց և մենայն Շայոց բանաստեղծություն, տաղանդավոր պոետին, քաղաքացուն, հպարտ ու ծջմարիտ հային և հայրենասերին: Սիլվա Կապուտիկյանը համազգային բացառիկ երևույթ էր, համազգային արժեք: Մեկ-մեկ այնպես է թվում, որ մենք կամաց-կամաց մոռանում ենք մեր ժողովրդի

ստեղծած արժեքները, մեր հպարտություն ու պարծանք երախտավորներին, որոնք պատիվ, հարգանք ու ճանաչում են բերել մեր ժողովրդին: Չպիտի մոռանանք, որ հիշողությունն է ազգի հավերժության, գոյատևման ամենակարևոր բաղադրիչը:

75 տարի առաջ, 1944 թվականին Սիլվա Կապուտիկյանը գրեց «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը, որը, ըստ էության, պատգամ է հայ ժողովրդին, ազգի ապրելու առհավատչյան:

Այս գարնան հետ, այս ծաղկունքի, Այս թռչնակի, այս առվակի, Ընտն այս երգի ու զարթոնքի Բացվեց լեզուն իմ մանկիկի: Ու թոթովեց բառ մի անգին Ըայկյան լեզվից մեր սրբազան, Ասես մասունք հաղորդության Դիպավ մանկանս շրթունքին...



## ԽՈՍՔ ԻՄ ՈՐԴՈՒՆ

- Լսիր, որդիս, պատգամ որպես Սիրող քո մոր խոսքը սրտանց, Այսօրվանից հանձնում եմ քեզ Հայոց լեզուն հազարազանձ:

Կտրել է նա, հանց աստղալույս, Երկինքները ժամանակի, Շառաչել է խռովահույզ Սլացքի հետ հայկյան մետի,

Ու Մեսրոպի սուրբ հանձարով Դարձել է գիր ու մագաղաթ, Դարձել է հո՛ւյս, դարձել դրո՛շ, Պահել երթը մեր անաղարտ... Նրանով է մրմնջացել Հայ պանդուխտը վերքն իր սրտի, Նրանով է որորտացել

Կռվի երգն իմ ժողովրդի, Նրանով է մայրս ջահել Ինձ օրորոց դրել մի օր, Հիմա եկել, քե՛զ է հասել Նրա կարկաչը դարավոր... Բա՛ց շուրթերդ, խոսի՛ր, անգին, Ժիր դայլայլի՛ր, իմ սիրասուն, Թող մանկանա՛ քո շուրթերին Մեր ալեհե՛ր հայոց լեզուն... Պահիր նրան բարձր ու վճիտ, Արարատի սուրբ ձյունի պես, Պահիր նրան սրտիդ մոտիկ, Քո պապերի աճյունի պես, Ու ոսոխի զարկիցը սև Դու պաշտպանի՛ր կրծքով նրան, Ինչպես մո՛րդ կպաշտպանես, Թե սո՛ւր քաշեն մորդ վրան, **Ու տե՛ս, որդիս, ո՛ւր էլ լինես, Այս լուսնի տակ ո՛ւր էլ գնաս, Թե մո՛րդ անգամ մտքիցդ հանես, Քո մա՛յր լեզուն չմոռանա՛ս:**

## Ազգի լեզուն է, որ ապգը պահելու է հավիտենական երթի մեջ

Այն որ հայը անհատականությունների ժողովուրդ է, երկու կարծիք լինել չի կարող: Անշուշտ, հետաքրքրելու է, թե որտեղի՞ց է սկիզբ առնում հայի անհատականությունը: Ծագման հետ կապ ունի՞: Իհարկե, ունի: Հայը աստվածաշնչյան ժողովուրդ է, հոգևոր ընթերցումով ասած, հայ ազգը խոր արմատներ ունի Աստծո ստեղծած հողում և սաղարթներ՝ Աստծո տարածած երկնքում: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ մենք՝ հայերս, շատ բաներում առաջինն ենք, այդ թվում՝ որպես քրիստոնեություն ընդունած, քրիստոնեացած ժողովուրդ: Քրիստոնեանալ, նշանակում է շուրթերով Քրիստոսին Տեր և Փրկիչ հռչակել-ճանաչել և սրտի խորքում դավա-

նել: Քրիստոնեանալ, նշանակում է որպես մարդ, նորանալ, նոր, այն է՝ աստվածային բնություն ստանալ, այլ կերպ ու ավելի պարզ՝ ասած, Աստծուն մերձենալ է նշանակում քրիստոնեանալը: Աստծո մերձավորը խոսելու է Աստծո լեզվով: Եվ բոլորովին պատահական չէ, որ, ասենք, անգլիաժին Ջորջ Գորդոն Բայրոնը հայերենը համարում է Աստծո հետ խոսելու լեզու: Ուրեմն, անհատականությունների ժողովուրդ լինելը, մախ և առաջ, զալիս է հայոց լեզվից, լեզվամտածողությունից: Հավիտենական երթի մեջ մնալը կապ ունի հայոց լեզվի հետ: Այս բանը հայտնապես գիտեր լուսավոր ու թախծալի զավակ Վահան Տերյանը՝ հայոց հոգին տեսնելով հայոց լեզվի մեջ:

Հիրավի, հոգևոր մեր սուրբ տաճարը մեր մայր լեզուն է: Հայն իր հայերենով է մեռնում և իր հայերենով էլ ապրում է: Մեր լեզուն մայր ենք համարում, որովհետև հոգևոր մեր ծնունդը մեր լեզվից է: Մեզ մնում է ճիշտ մոտեցում ունենալ, իմանալ հայոց լեզվի ամեն բառի խորքի արժեքը և, ինչպես նախկինում գրել են, մեր բերանով, մեր Ոսկեբերաններով, կյանքը հռչակենք: Խոսենք հավիտենական կյանքի խոսքը, ինչպես, ասենք, Քրիստոսն ինքը, և ոչ թե ժամանակավոր, մեռնող, կորչող աշխարհական կյանքի: Այն, ինչ հայոց լեզվին է ու հայոց լեզվի մեջ, Աստծուն է և Աստծո խոսքի մեջ, Աստվածաշնչի մեջ: Հայոց բոլոր մեծերը, հոգու աշխատանքի առումով, անկասկած ու անխտիր, հայոց լեզվի ծնունդ են: Հայոց լեզվի մեջ հնչող մեղեդին է, որ Կոմիտաս է ծնել և ոչ թե Կոմիտասն է, որ ծնել է մոր մեղեդի: Մեր լեզուն մեր հոգու կենդանի մարմինն է՝ իր համակարգով: Կոմիտասը հայ ազգին ի վերուստ տրված մեղեդին, որին խառնվել,

խառնել, խլացրել էր աշխարհական աղմուկը, կարողացել է զանազանել, զատել, դուրս բերել, առանձնացնել, բարձրացնել կորստյան գուրից և հնչեցնել: Այդպես, այդ սկզբունքով Աստված աշխարհին արարելիս առանձնացնում է լույսը (ցերեկը) խավարից (գիշերից): Այնպես որ, Կոմիտասի կատարածը բացատրելի է միայն նրա աստվածային բնությամբ: Կոմիտասը որպես պատվական անոթ է ծառայել Աստծո նվեր հայոց լեզվի ձեռքին: Հայոց լեզվի մեջ եղած Սուրբ Հոգին գործել է Կոմիտասի մեջ և Կոմիտասի միջոցով: Ուրեմն, մեղեդին Կոմիտասին չէ, Կոմիտասն է մեղեդունը: Նույնը Նարեկացու պարագային. Նարեկացին չէ, որ աստվածային մտածողություն է տվել հայոց լեզվին, բառին, Նարեկացին չէ, որ ծնել է լեզու, բառ և լեզվամտածողություն. հայոց լեզուն է իր բառաթերքով, իր մեջ գործող Սուրբ Հոգու մերձնչումով, համակարգով մարմին առել «Մատյանում»: Այնպես որ, Հռոմի Ֆրանցիսկոս Պապի տիեզերական բնութագիրը Նարեկացուց առաջ վերաբերում է հայոց լեզվին, մասնավորապես գրաբարին, որ մեր աղոթքի լեզուն է: Իսկ ի՞նչ է աղոթքը՝ Աստծո հետ հաղորդակցության մեջ մտնելու միջոց: Պտղաբեր, անկեղծ, սրտի խորքից բխող աղոթքը երկխոսություն է մարդու և Աստծո միջև:

Եվ քանի որ հայոց լեզուն աստվածային բնություն ունի, միաժամանակ ունենալու է աստվածային սրբություն, առանց որի մարդը կատարյալ լիներուց շատ հեռու է, այնքան հեռու, որքան ասենք, երկիրը երկնքից: Քանի որ հայի լեզուն սուրբ է, հայը նույնպես սուրբ լինելու է:

**Հարություն ՀՈՎՆԱԹԱՆ**  
**Բանաստեղծ, հրապարակախոս**







## ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՀՈՒՆՆԵՐ

Էլմա Ս. Պարսամյան-90

Աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Զամբարծումյանի հայ ուսանողների առաջին սերնդից շատերն են հասել մեծ հաջողությունների, ընտրվել Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի, միջազգային գիտական կազմակերպությունների անդամ: Նրանցից մի քանիսի հայտնաբերած ու հետազոտած օբյեկտները համաշխարհային գիտական գրականության մեջ կոչվում են իրենց անունով: Սակայն նրանց թվում քիչ են կանայք, իսկ նշված բոլոր հաջողություններին հասել է այդ կանանցից միայն մեկը՝ ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի գլխավոր գիտաշխատող, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էլմա Պարսամյանը, ով դարձել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ ֆիզիկայի բնագավառում:

Ապագա գիտնականը ծնվել է Երևանում 1929 թվականի դեկտեմբերի 23-ին պետական ծառայողի ընտանիքում:

1946 թ. դեռևս դպրոցական է. Պարսամյանը առաջին անգամ հանդիպել է Վիկտոր Զամբարծումյանին, որը նրան դեռ այն ժամանակ խորհուրդ է տվել աստղագետ դառնալու համար լավ սովորել մաթեմատիկա և անգլերեն:

1949-1954 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի աստղագիտության բաժնում: Ավարտելուց հետո է. Պարսամյանը աշխատանքի ընդունվեց Բյուրականի աստղադիտարանում, որտեղ աշխատում է ավելի քան վեց տասնամյակ, տպագրելով մոտ 150 գիտական և մի քանի տասնյակ գիտահանրամատչելի հոդվածներ, որոնք վերաբերում են գլխավորապես աստղաֆիզիկային, ինչպես նաև հնագույն աստղագիտության տարբեր խնդիրներին:

Աշխատանքային առաջին երեք տարիների ընթացքում, ջրածնի և հելիումի քանակությունների հարաբերության որոշման նպատակով, ներուլար սպեկտրոգրաֆի օգնությամբ, ուսումնասիրել է Օրիոնի միգամածության տիրույթը: Ստացված արդյունքները ոգևորիչ էին և խթան հանդիսացան, որպեսզի 1957 թ. է.

Պարսամյանը ընդունվի ասպիրանտուրա (գիտական դեկավար՝ Գ. Ա. Գուրգադյան):

Հատկապես հետաքրքրական էր նրա ստացած առնչությունը գիսավորածն միգամածությունների ինտեգրալ լուսատվության և դրանց հետ կապված աստղի պայծառության միջև: Հենց այդ թեմայով էլ 1963 թ. Երևանի պետական համալսարանում նա պաշտպանեց իր թեկնածուական ատենախոսությունը՝ «Գիսավորածն միգամածությունների գունաչափություն և բևեռաչափական հետազոտություններ» աշխատանքը:

Հետագայում գիտնականը հայտնաբերեց ավելի քան չորս տասնյակ նոր գիսավորածն միգամածություններ, կազմեց դրանց առաջին կատալոգը և կատարեց դրանց նոր դասակարգում: Այդ միգամածությունների մի մասն այսօր էլ կոչվում են Պարսամյանի անունով: Բացի գիսավորածն միգամածություններից, Է. Պար-

սամյանը Մ. Ղազարյանի հետ հայտնաբերել է նաև 8 նոր մոլորակաձև միգամածություններ, որոնցից KJPn8-ը (Ղազարյան-Պարսամյան 8) մեծ հետաքրքրություն ներկայացնող եզակի օբյեկտ է: Կատարվել է նաև այդ օբյեկտների մասնաբաժան սպեկտրալ ուսումնասիրություն:

Աստղաֆիզիկական հետազոտությունների երկրորդ փուլը կապված է փոփոխական, առաջին հերթին, բռնկվող աստղերի ուսումնասիրությունների հետ: Է. Պարսամյանն ակտիվորեն մասնակցել է բռնկվող աստղերի դիտումներին՝ հայտնաբերելով ավելի քան 100 բռնկվող աստղ և 200-ից ավելի բռնկում Բազումբի, Օրիոնի և NGC 7023-ի բռնկվող աստղերի համակարգերում: Օգտագործելով առկա տվյալները Է. Պարսամյանը մի շարք կարևոր արդյունքներ է ստացել: Հատկապես պետք է նշել բռնկվող աստղերի տարիքի որոշման նրա կողմից մշակված մեթոդը:

Ընդհանրապես աստղաֆիզիկայում կարևոր խնդիրներից մեկը տիեզերական մարմինների տարիքի որոշումն է: Պետք է նշել, որ Վիկտոր Զամբարծումյանին հաջողվել էր ցույց տալ, որ ցածր լուսատվության ու փոքր զանգվածով բոլոր կարմիր աստղերն իրենց երիտասարդության ընթացքում անպայման անցնում են բռնկումային փուլով: Սակայն խնդրի պարզաբանման համար անհրաժեշտ էր, հնարավորության դեպքում, գտնել բռնկումային ակտիվության ու տարիքի կապը:

Պարսամյանին հաջողվել է էական ներդրում կատարել այս բնագավառում, մշակելով մի մեթոդ, որը թույլ է տալիս որոշել աստղասփյուռի կամ աստղակույտի տարիքը՝ օգտագործելով այդ համակարգերում առկա բռնկվող աստղերի բռնկումային ակտիվությունը: Ավելին, նոր բանաձև է ստացվել նաև Արեգակի շրջակայքի բռնկվող առանձին աստղերի տարիքը որոշելու համար: Այդ աշխատանքը բարձր գնահատական ստացավ Համբարծումյանի կողմից՝ որպես աստղակույտերի և աստղերի տարիքները գնահատելու այլընտրանքային մեթոդ:

Բռնկվող աստղերի հետազոտությունները 1983 թ. հիմք դարձան Է. Պարսամյանի «Բռնկվող աստղերը աստղային ագրեգատներում» դոկտորական ատենախոսության համար: Դոկտորական ատենախոսության համար դիտողական նյութը ստացվել էր անձամբ հեղինակի կողմից Բյուրականի աստղադիտարանի 40 դյույմանոց Շմիդտի տիպի աստղադիտակով:

Աստղային փոփոխությունների ուսումնասիրությունների մեջ առանձնահատուկ տեղ ունեն է. Պարսամյանի աշխատանքները, որոնք նվիրված են սուրֆուրների (EXor) հետազոտություններին: Այս փոփոխականները պատկանում են անհամեմատ սակավաթիվ և միաժամանակ առավել հանելուկային օբյեկտների թվին, որոնց ֆիզիկական բնույթի պարզաբանումը դեռևս մնում է որպես ապագայի գործ: 1980-ական թվականներ-

ից սկսած Է. Պարսամյանը իր մեքսիկացի և իսպանացի կոլեգաների հետ, իր դեկավարությամբ, ինտենսիվորեն ուսումնասիրել են Օրիոնի համաստեղության մեջ գտնվող V1118 Ori և V1143 Ori սուրֆուրները: Այդ օբյեկտների մոնիտորինգի արդյունքում նրանց կողմից գրանցվել է 7 բռնկում, ստացվել են դրանց պայծառության կորերը բռնկման ողջ ընթացքում:

Չնայած աստղաֆիզիկական հետազոտությունների բավականին մեծ քանակին և դրանցով զբաղվածությանը, Է. Պարսամյանը 1966թ. ի վեր բավականին կարևոր աշխատանքներ է կատարել նաև Հայաստանի տարածքում հին աստղագիտական գիտելիքների մակարդակի վերահաման ուղղությամբ: Այդ աշխատանքներից առավել հայտնի են Մեծամորում դիտողական հարթակների հետազոտությունները: Մեծամորը իր տեսակի մեջ եզակի օբյեկտ է ոչ միայն հայկական, այլև համաշխարհային արքեոաստղագիտության մեջ: Կատարելով անհրաժեշտ չափումները և օգտագործելով սֆերիկ աստղագիտության մեթոդները Է. Պարսամյանը հնարամտորեն լուծեց խնդիրը՝ որոշեց թե ո՞ր պայծառ աստղերն են երբևէ ծագել հորիզոնի այն կետում, որի հետ հատվում է այն հարթակի միջին գծի երևակայական շարունակությունը, որտեղ չորս անգամ պատկերված է աստղի նշանը: Դա էր Մեծամորի փոքր բլրի առեղծվածի հանգուցալուծումը:

Այս ամենը վկայում է այն մասին, որ հայկական լեռնաշխարհի բնակիչները քաջ ծանոթ էին աստղալից երկնքին և կարող էին լուսատուի պարբերաբար երևալն օգտագործել ժամանակը հաշվելու համար:

Պետք է հիշատակել նաև, որ նա առաջինն էր, ով դեռևս 1984 թ. ուշադրություն հրավիրեց Ջորաջ քարեր մեգալիթային կառույցի հնարավոր աստղագիտական նշանակության վրա:

Բեղմնավոր գիտական աշխատանքի հետ համատեղ Պարսամյանը զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ՝ դասավանդելով Երևանի պետական հա-

մալսարանում և Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում: Վերջինում զբաղեցրել է նաև «Տեսական ֆիզիկայի և աստղագիտության» ամբիոնի վարիչի պաշտոնը: 90-ականներին է. Պարսամյանը աշխատել և դասավանդել է Մեքսիկայի աստղաֆիզիկայի, օպտիկայի և էլեկտրոնիկայի ազգային ինստիտուտում:

Է. Պարսամյանի գիտական գործունեությունը բարձր է գնահատվել գիտական համրության և իշխանությունների կողմից, ինչն արտահայտվել է տարբեր պատվոգրերի, մեդալների, այդ թվում՝ «Անանիա Շիրակացի» մեդալի շնորհումով: Է. Պարսամյանը մասնակցել է միջազգային 30 գիտաժողովների, որոնցից գրեթե բոլորում հանդես է եկել գիտական հաղորդումներով: Իր գիտական գործունեության ընթացքում աշխատել է Գերմանիայի, Մեքսիկայի, Յուգոսլավիայի, Իտալիայի, Իսպանիայի, ԱՄՆ-ի տարբեր գիտական կենտրոններում: Անդամակցում է Միջազգային աստղագիտական միությանը, Եվրոպական, Եվրասիական և Հայկական աստղագիտական ընկերություններին, երկար տարիներ անդամակցել է Բյուրականի աստղադիտարանի գիտական խորհրդին, ինչպես նաև աստղադիտարանին կից գիտական աստիճաններ շնորհող մասնագիտացված խորհրդին, որի նախագահն է եղել 2005-2016 թթ., «Աստղաֆիզիկա» հանդեսի խմբագրական կոլեգիայի անդամ է և այլն:

Մեծ է նրա հարգանքն ու սերը իր ուսուցչի հիշատակի հանդեպ: Պատահական չէ, որ Վիկտոր Զամբարծումյանի գիտական աշխատությունների երրորդ հատորի, ինչպես նաև նրա 100-ամյակին նվիրված հիշողությունների գրքի նախաձեռնողն ու կազմողն էր Էլմա Պարսամյանը:

Է. Պարսամյանի հետաքրքրությունների շրջանակը չի սահմանափակվում միայն աստղագիտությամբ: Այն ընդգրկում է գիտության մյուս ճյուղերը, արվեստը, պատմությունը և այլն:

Նա գրականության, մասնավորապես պոեզիայի, լավ գիտակ է: Լեզուների լավ իմացության շնորհիվ նա ռուս, իսպանացի, անգլիացի և գերմանացի պոետներին կարդացել է բնագրով: Պոեզիայի նկատմամբ մեծ սիրո յուրատեսակ վկայություն է սեփական բանաստեղծությունների փոքրիկ ընտրանին:

Է. Պարսամյանը քաջատեղյակ է նաև արվեստի մյուս բնագավառներին, մասնավորապես՝ զեղանկարչությանը: Այդ հարցում մեծ էր նրա եղբոր՝ վաստակավոր նկարիչ Ալբերտ Պարսամյանի դերը:

Կարելի է երկար շարունակել գիտնականի և՛ աշխատանքների, և՛ նվաճած բարձունքների մասին: Եվ ինչ էլ գրելու լիներ, չպետք է մոռանալ նրա մի քանի շատ կարևոր մարդկային հատկությունների մասին: Դա առաջին հերթին նրա կառուցողական մոտեցումն ու նվիրվածությունն է Հայաստանում աստղաֆիզիկայի պահպանման և զարգացման գործին:

**ՀՀ ԳԱԱ նախագահություն**  
**ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք**  
**ՀՀ ԳԱԱ Վ. Համբարծումյանի անվան Բյուրականի աստղադիտարան**


## ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2019 թվականի նոյեմբերի 6-ից 10-ը Վիենայում (Ավստրիա) տեղի ունեցավ գրքի միջազգային խնդրագույն ցուցահանդես (BUCH WIEN 2019), որին մասնակցում էին աշխարհի տարբեր երկրներ: Այն կազմակերպվել էր Ավստրիայի և Եվրոպական խորհրդի աջակցությամբ: Ներկայացված էին 385 հրատարակչություններ աշխարհի 25 երկրներից: Ցուցահանդեսին մասնակցել է ավելի քան 55 հազար մարդ:

Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ, «Գիտություն» թերթի մշտական թղթակից Ստեփան Պապիկյանի «Հայաստանի էներգետիկայի պատմությունը» քառահատոր մենագրության ռուսերեն և անգլերեն լեզուներով անոտացիաները ներկայացվեց այդ հեղինակավոր միջազգային ցուցահանդեսում և մեծ արձագանք ունեցավ: Այն իր բնույթով եզակի է ամբողջ աշխարհում և տպագրվել է հեղինակավոր կատալոգում: Հաշվի առնելով հեղինակի իսկապական ներդրումը գիտության բնագավառում, Ստեփան Պապիկյանն արժանացել է «BUCH WIEN 2019» ոսկե մեդալի, իսկ նրա աշխատանքի անոտացիան ընդգրկվել է կատալոգում:



## Բորիս ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



Կյանքից հեռացավ 33 ԳԱԱ ակադեմիկոս Բորիս Կարապետյանը

Սույն թվականի դեկտեմբերի 12-ին 95 տարեկան հասակում կյանքից հեռացավ բազմաթիվ գիտնական, 33 ԳԱԱ ակադեմիկոս, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բորիս Կարապետյանը:

Բորիս Կարապետյանի կողմից մանրամասն ուսումնասիրվել են 1949 թ. Բյուրականի, 1968 թ. Քաջարանի և 1988 թ. Սպիտակի երկրաշարժերի ազդեցությունները քաղաքացիական և արդյունաբերական կառույցների վրա: Նա հեղինակ է շուրջ 200 գիտական աշխատությունների, այդ թվում՝ «Բազմաճյուղային սեյսմոմետրերը և նրանց կիրառումը ինժեներային սեյսմոլոգիայում», «Հայաստանում կառուցված շենքերի տատանումները» և «Ինժեներային սեյսմոլոգիայի և շինարարական կոնստրուկցիաների մատենագիտական տեղեկատու» մենագրությունների և բազմաթիվ մեծարժեք գիտական աշխատությունների, որոնք մինչ օրս մնում են արդիական:

Բորիս Կարապետյանը ակադեմիկոս Արմենակ Նազարովի հետ համատեղ Լենինականում հիմնադրել է երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտը: 1961-1971 թթ. ղեկավարել է ինստիտուտի ինժեներային սեյսմաբանության բաժինը: 1966-1971 թթ. Սեմիպալատինսկում ղեկավարել է միջուկային պայթյունների ժամանակ շենքերի և կառուցվածքների վարքագծի ուսումնասիրման աշխատանքները: 1974-1980 թթ. զբաղեցրել է ՀԽՍՀ Պետշինի շինանյութերի և շինարարական կառուցվածքների հայկական գիտահետազոտական ինստիտուտի գիտական գծով փոխտնօրենի պաշտոնը: 1994-2001 թթ. եղել է 33 ԳԱԱ երկրի մասին գիտություններ պրոբլեմային գիտական խորհրդի նախագահը, «Գիտություններ երկրի մասին» տեղեկագրի գլխավոր խմբագիրը:

Բորիս Կարապետյանը 1964 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1970 թ. ստացել պրոֆեսորի կոչում: 1990 թ.-ին ընտրվել է 33 ԳԱԱ թղթակից անդամ, 1996 թ.-ին՝ 33 ԳԱԱ ակադեմիկոս:

1987 թ.-ից Բորիս Կարապետյանն անդամակցել է ԱՄՆ-ի Սեյսմաբանական ընկերությանը, 1993 թ.-ից եղել է Ֆրանսիայի «Արարատ» միջազգային ակադեմիայի թղթակից անդամ:

Մեծ է Բորիս Կարապետյանի դերը սերունդների կրթության և կադրերի պատրաստման գործում: 1971-1974 թթ. նա դասավանդել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում: 1981-1994 թթ. եղել է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի «Երկաթբետոնե, քարե կոնստրուկցիաների և կառուցվածքների սեյսմակայունություն» ամբիոնի վարիչը: Նա ղեկավարել է 16 թեկնածուական և 1 դոկտորական ատենախոսական աշխատանք:

Ակադեմիկոս Կարապետյանն իր բազմաթիվ գիտական, գիտակազմակերպչական և մանկավարժական գործունեության համար պարգևատրվել է մի շարք կառավարական պարգևներով, մրցանակներով և դիպլոմներով: 1974 թ. նրան շնորհվել է ՀԽՍՀ Պետական մրցանակ գիտության և տեխնիկայի ասպարեզում ունեցած նվաճումների համար: Նա նաև ԱՄՆ-ի Հայկական գիտական և ճարտարագիտական ընկերության Կ. Համբարձումյանի անվան մրցանակի դափնեկիր է:


33 գիտությունների ազգային ակադեմիան, 33 ԳԱԱ քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունքը, 33 ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտը, գիտական հանրությունը սգում են անվանի գիտնականի մահը և իրենց ցավակցությունն են հայտնում ակադեմիկոս Բորիս Կարապետյանի հարազատներին և գործընկերներին:

Անցնող տարում լրացավ հայ կինոյի և թատրոնի Նահապետ Սոս Սարգսյանի ծննդյան 90 տարին: Այսօր ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում երևելի դերասանի, քաղաքացու և զարմանալի մարդու վերջին հարցազրույցը: Պարզապես նրա համար, որ չմոռանանք մեր մեծերին:

ՎԵՐՋԻՆ  
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

Ես, Ռոբերտ Մաթոսյանս, դեմ դիմաց նստած գրուցում եմ 83-ամյա իմաստուն մի մարդու հետ: Խոսք է բացվում այսօրվա արվեստի, մշակույթի, հայի տեսակի մասին: Հարցնում եմ՝ ի՞նչն է, որ մտահոգում է նրան, որտե՞ղ է, որ ազգովի մենք սխալվել ենք, և ի՞նչը կցանկանար, որ չկրկնվեր...

– Ամբողջական հարցազրույցը բազմաշերտ է... Գիտե՞ս, Ռոբերտ, մի տոկալի երևույթ կա այս աշխարհում: Չգիտեմ ինչից է գալիս, դա հիվանդությունն է, ինչ է, ո՞նց է ծնվում մարդու մեջ. անունը վախ է, տոկալի մի բան, մարդուն տակնուվրա անող մի բան: Գիտե՞ս, 1915 թվականը հայ ժո-



## ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆ

## Կորցնելով ռուսական մշակութային դաշտը, մենք կորցնում ենք ամեն ինչ...



ղովրդի մեջ բուն դրած վախից նաև սկսվեց: Թուրքերը կարողացան մեր աչքի պեծը կտրել: Սկզբում մեր մեջ վախ ներարկեցին, հետո սկսեցին սրի քաշել: Գերմանացի մշակավոր արևելագետ, Հայկական հարցի գիտակ Յոհաննես Լեփսիուսն ասում է, որ «Եթե մի երեք Մուսա լեռ լինեք, գործն այլ ընթացք կունենար»: Բայց, որովհետև համատարած վախ էր մտել մեր ժողովրդի մեջ՝ մեծից փոքր, ուժեղից թույլ վախվորած էին, եղ վախը ամբողջ ազգը կոլուլեց, վախը փաթաթվեց վզին, և միլիոնավոր մարդիկ մոլորվեցին ու մորթվեցին: Հարցնում ես՝ ի՞նչը կցանկանայի, որ չկրկնվեր: Ես կուզեմ, որ հայ ազգը այլևս այդ վախի զգացողությունը չունենա: Երբ ինձ հարցնում են՝ մեր հոգսը, գործը խոսք ո՞րն է, ասում եմ՝ արիություն ու խիզախություն սերմանելը, հերոսություն և համարձակություն ներարկելը: Պետք չէ մտածել, որ թուրքերը մեզանից շատ են: Մենք երբեք չպիտի վախենանք և պիտի իրենց նման նախահարձակ լինենք, ամեն տեղ, ամեն րոպե: Սա է պաշտպանության լավագույն ձևը:

Յետո թուրքերը եկան Երևան, մեզ հետ ֆուտբոլ խաղացին, և ի՞նչ...


Հայ ֆուտբոլիստների համազգեստի վրայից Արարատ լեռը հանեցինք: Դա ինչի՞ նշան է, որ դու դեռ էլի վախկոտ ես, որ համարձակ չես, թուրքի առաջ կռացած մարդ ես: Կռացած մարդը արդեն իսկ պարտված մարդ է: Հիմա ուզում եմ ականջներիս օղ անենք... Ոչ միայն այդպիսի մասսայական օրերին պիտի Արարատի խորհրդանիշը իշխի, այլև Մեծ Եղեռնի սգո 100-րդ տարելիցին ընդառաջ մենք պետք է Արարատի մշակութային գնահատման համարձակություն ունենանք: Ի՞նչ ասել է դա... Այնտեղ, որտեղ հնարավոր է, Սուրբ Լեռան քանդակը պիտի տեղադրել: Ամենուր Արարատի նկարները կախել, փողոցների պատշգամբներից, դրոշմների վրա Արարատ լեռան պատկերը պիտի ծածանվի, որովհետև աշխարհին մենք ոչինչ չունենք ասելու: Եթե Արարատի նկարն իմ դռնից կացրած է, իմ տան դռնին ծածանվում է, դրանով, առանց բարձրածայներու, լռելայն ես աշխարհին ասում եմ՝ ես իմ երկիրն եմ. ես իմ հողն եմ... Ես կոչ եմ անում հայ ազգին, Սփյուռքից սկսած ամեն տեղ, ամեն քայլափոխի առաջնորդվել Սուրբ Լեռան մշակութային: Արարատը նաև մեր պահանջատիրության խորհրդանիշն է:

Թուրքերը մեկուկես միլիոն հայ չէ որ կոտորել են: Հինգ հարյուր տարի շարունակ նրանք, ծեռի հետ, հա կոտորել են: Իսկ ի՞նչ եղավ այդ 1.5 միլիոն ժողովրդի ինչքը, նրա տունը, նրա ունեցվածքը, նրա հարստությունը, նրա մատներից ու ականջներից ճաշպորած ոսկեղենը, մեջքերին կապած արծաթե գոտիները: Մանրամասն պիտի հաշվարկել, բոլորը պիտի ի մի բերել և ասել. «Բացի հողերից, որը դուք պարտավոր եք տալ, մեզ պիտի վերադարձնեք նաև թալանած հարստությունը»:

Հատուցում բառը պետք է անդադրում կրկնենք:

Հատուցում և նորից հատուցում...

Հրեաները 2000 տարի իրար հանդիպելիս ասում էին՝ հաջորդ տարի Երուսաղեմում հանդիպենք: Երկու հազարամյակ հետո մենք տեսանք, թե նրանք ուր հասան...



Հիմա ամեն մի հայ բաժանվելիս պիտի հաջողություն մարթի և ասի՝ եկող տարի Վանում հանդիպենք: Ասել է պետք, դա կարող է լինել 50 տարի, 100 տարի հետո: Պիտի անընդհատ ասենք, ինչպես հրեաները, որպեսզի լինի: Վանում հանդիպման ու հատուցման գաղափարը մեր մշտական ուղեկիցը պիտի լինի:

Այո՛, վատ է, որ մենք փոքրաթիվ ազգ ենք, իսկ փոքրաթիվ ազգերից ավելի շատ կազմակերպվածություն է պահանջվում: Ավելի շատ տղամարդկություն է պահանջվում, քան, ասենք՝ իտալացիներից ու իսպանացիներից: Նրանց դա պետք չէ: Մեր փրկությունը բռնկվելու և անվախության մեջ է:

Երկրորդ: Պետություն ենք, սակայն դեռ ապրում ենք թայֆաներով, մտածում ենք թայֆայավարի՝ առաջնային անձնական շահը համարելով: Սա է մեզանից շատերի հոգեբանությունն ու փիլիսոփայությունը: Ինձ համար հարցերի հարցը պետականությունն է: Իշխանությունները զալիս են ու գնում: Յետո մեզ բնորոշ մի վատ հատկանիշ, փաստ: Չնայած ղեկավարի մի տեղ ունենք, բոլորս ուզում ենք ղեկավար դառնալ: Եղպես երկիր չենք դառնա: Խստապահանջ լինելը այլ խնդիր է, որ ասենք՝ դու ես այս երկրի տեր, հերիք եղավ, բոլ եղավ...

(Շարունակելի)

Հարցազրույցը վարեց Ռոբերտ ՄԱԹՈՍՅԱՆԸ  
«+ ԿԻՆՈ» ամսագրի գլխավոր խմբագիր



## Դավիթ Միերի ՍԵՂՐԱԿՅԱՆ



2019 թ. դեկտեմբերի 1-ին 81 տարեկան հասակում կյանքից հեռացավ է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆ.մ.գ.դ., ԵՊՀ պրոֆեսոր Դավիթ Միերի Սեղրակյանը:

Դ. Սեղրակյանը ծնվել է 1938 թ. դեկտեմբերի 9-ին Երևանում: 1955 թ. ոսկե մեդալով ավարտելով Երևանի Մ. Գորկու անվան միջնակարգ դպրոցը՝ Դ. Սեղրակյանը ընդունվել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի ֆիզիկա բաժինը: 1961 թ. նա գերազանցությամբ ավարտել է համալսարանը և 1962 թ. ընդունվել ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Պ. Ն. Լեբեդևի անվ. ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան: Դ. Սեղրակյանը 1964 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ՝ լիցքավորված մասնիկի դիֆրակցիոն ճառագայթման թեմայով, վերադարձել է Երևան և սկսել իր աշխատանքային գործունեությունը դոցենտի պաշտոնում՝ ԵՊՀ տեսական ֆիզիկայի ամբիոնում: 1972 թ. նա հաջողությամբ պաշտպանել է դոկտորական թեզ՝ «Պատվող երկնային մարմինների տեսություն» թեմայով, 1975 թ. արժանացել պրոֆեսորի կոչման:

1977-1986 թթ. ղեկավարել է ԵՊՀ ընդհանուր ֆիզիկայի ամբիոնը, միաժամանակ շարունակելով ակտիվ գիտական գործունեությունը: 1982 թ. ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1990 թ.՝ ակադեմիկոս, 1986-1994 թթ. աշխատել է ՀՍՍՀ ԳԱ ճախագահությունում՝ ակադեմիկոս-քարտուղարի, ապա փոխնախագահի պաշտոններում: 1994 թ. Սեղրակյանը ղեկավարել է ԵՊՀ Վ. Համբարձումյանի անվ. ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնը: Վերջին տարիներին ամբիոնի պատվավոր վարիչն էր և ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտի քվանտային երևույթների հետազոտման և մոդելավորման լաբորատորիայի գլխավոր գիտաշխատողը:

Դ. Սեղրակյանի հաջողությունները գիտության մեջ նշանակալից են, հատկապես տեսական աստղաֆիզիկայի ոլորտում: Դրանք ներառում են գերխիտ երկնային մարմինների պտույտի պրոբլեմը, պտույտող նեյտրոնային աստղերում մագնիսական դաշտի առաջացումը, բաբախիչների ռադիոճառագայթման մեխանիզմները, ինտենսիվ գրավիտացիոն ալիքների ճառագայթման աղբյուրների գոյության հնարավորությունները: Ընդհանուր հարաբերականության տեսության շրջանակներում նրա ստացած լուծումը գիտական մեծ արժեք ունեցավ, առաջարկելով պտույտող կոնֆիգուրացիաների պարամետրերի հաշվման նոր մեթոդ, որը հետագայում հիմք դարձավ պտույտող երկնային մարմինների նոր մոդելների հաշվման համար:

Դիտարկելով նեյտրոնային և պրոտոնային գերհոսելի կոնդենստների փոխազդեցությունը, Դ. Սեղրակյանը հայտնաբերում է նոր ֆիզիկական երևույթ՝ ներկայումս հայտնի «տարման էֆեկտ» անունով: Վերջինիս շնորհիվ բաբախիչներում գերհոսելի նեյտրոնների քվանտային թելերը ստեղծում են պրոտոնային թելեր, որոնք գեներացնում են դիտվող հզոր մագնիսական դաշտեր: Դ. Սեղրակյանի առաջարկած բաբախիչների ռադիոճառագայթման մեխանիզմը սկզբունքորեն տարբերվում է մինչ այդ եղած առաջարկ-

ներից: Ըստ նրա՝ ճառագայթումը կազմավորվում է աստղի միջուկի և կեղևի սահմանին և դուրս է գալիս մագնիսաձայնային և Ալֆվեյնյան ալիքների միջոցով:

Դ. Սեղրակյանի աշխատանքների մյուս ցիկլը վերաբերում է բաբախիչների պտտական շարժման դիտվող դանդաղեցմանը, որն ուղեկցվում է անկյունային արագության «ցատկերով»: Ելնելով իր այն հիպոթեզից, թե իր կողմից հայտնաբերված նեյտրոնային թելերի ցանցը աստղի պտույտի դանդաղեցմանը զուգընթաց աստիճանաբար նոսրանում է, Դ. Սեղրակյանը իր աշակերտների հետ առաջարկում է բաբախիչների պտտական շարժման արգելակման երեք մեխանիզմ և ի հավելումն գտնում, որ դանդաղեցման ժամանակ, մակերևույթի ջերմաստիճանի աճի շնորհիվ աստղը դառնում է ռենտգենյան ճառագայթման աղբյուր: Ստացված օրինաչափությունները համահունչ են տիեզերքից եկող ռենտգենյան ճառագայթմանը վերաբերող դիտողական օրինաչափություններին:

Սկսած 1994 թ. Դ. Սեղրակյանը՝ նեյտրոնային աստղերի տեսական հետազոտություններին զուգահեռ, իր գործընկերների հետ կատարել է գիտական ուսումնասիրություններ՝ ուղղված էլեկտրոնների կողմից պոտենցիալային արգելքների անցման և անդրադարձման գործակիցների հաշվումներին, էլեկտրոնների հնարավոր տեղայնացման (լոկալիզացման) խնդիրներին:

Բեղմնավոր է նաև Դ. Սեղրակյանի ուսումնամակալարժեքական գործունեությունը: Մոտ 30 տարի ամբիոնի ղեկավարության ընթացքում նրա անմիջական ղեկավարությամբ պաշտպանվել են 12 դոկտորական և 11 թեկնածուական ատենախոսություններ:

Մոտ 300-ի հասնող գիտական հոդվածները ակադեմիկոս Դ. Սեղրակյանին հետազոտությունների իր ասպարեզում բերել են միջազգային լայն ճանաչում: Նա բազմիցս իրավորված ելույթներով հանդես է եկել տարբեր երկրներում կազմակերպված միջազգային կոնֆերանսներում (Ֆրանսիա, ԱՄՆ, Գերմանիա, Մեծ Բրիտանիա և այլն): Դ. Սեղրակյանը եղել է մի շարք միջազգային կոնֆերանսների և թեմատիկ սեմինարների ակտիվ կազմակերպիչներից, երկար տարիներ հանդիսացել ՀՍՍՀ ԳԱ «Ջեկույցներ» ամսագրի գլխավոր խմբագրի տեղակալը, ապա ՀՀ ԳԱԱ «Աստղաֆիզիկա» ամսագրի գլխավոր խմբագիրը: Դ. Բլաշկերի հետ շարունակաբար նա կազմում և հրատարակում էր «Superdense QCD Matter and Compact Stars» միջազգային հանդեսը, համախմբագիր էր Վ. Համբարձումյանին նվիրված վերջերս հրատարակված «Ambartsumian's Legacy and Active Universe» գրքի:

Դ. Սեղրակյանը «Ատոմիկոնառ արքիալ-սիմետրիկ դաշտերը Էյնշտեյնի տեսությունում» աշխատանքի համար 1970 թ. ստացել է ՀԼԿԵՄ պետական մրցանակ, 1999 թ. արժանացել է Անանիա Շիրակացու մեդալի, 2015 թ. ստացել է ՀՀ ԳԱԱ ոսկե մեդալ, իսկ 2019 թ.՝ Հայրենիքին մատուցած ծառայությունների համար պարգևատրվել է 1-ին աստիճանի մեդալով: Լինելով գործուն խառնվածքի տեր, նա քաղաքացիական մտահոգությամբ է արձագանքում հասարակական կյանքի խնդիրներին: Նրա մեջ լայն ճանաչում ստացած գիտնականի կողքին մշտապես առկա է մնում ակտիվ, օբյեկտիվ օրինաչափությունների հենքի վրա զարգացման ճանապարհներ փնտրող քաղաքացին:


ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքը, գիտական հասարակությունը սգում են անվանի գիտնականի մահը և իրենց ցավակցությունն հայտնում ակադեմիկոս Դավիթ Սեղրակյանի հարազատներին և գործընկերներին: Նրա հիշատակը հավերժ կմնա հայ աստղագիտության պատմության մեջ:

ՀՀ ԳԱԱ ճախագահություն  
ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի  
բաժանմունք


## ՀՀ ԳԱԱ-ում կայացավ «Ցեղապանության հետևանքով հայ ժողովրդի կորուստների և հատուցման կառուցակարգերի մեթոդաբանական հիմքերը» կոլեկտիվ մենագրության շնորհանդեսը

Մենագրության համար հիմք են հանդիսացել 2016-2018 թթ. ընթացքում ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի կողմից իրականացված Մեծ եղեռնի հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներին նվիրված աշխատանքները, որոնք մեկնարկել են 2015 թ. հունվարի 29-ի Հայոց ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ ընդունված Համահայկական հռչակագրի իրապարակումից հետո:

Հետազոտական խմբում ընդգրկված մասնագետների կողմից ուսումնասիրվել են հայերի հայրենագրկման, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի և հատուցման հիմնախնդիրներին նվիրված հարցեր: Անդրադարձ է կատարվել հայ ժողովրդի կրած ժողովրդագրական կորուստներին, ներկայացվել է արևմտահայ կերպարվեստի, թատրոնի, երաժշտության, ինչպես նաև հայկական ճարտարապետական հուշարձանների նկատմամբ իրականացված և շարունակվող մշակութային եղեռնի



քաղաքականությունը: Հետազոտվել են Արևմտյան Հայաստանի բնական պաշարներից տեղաբնիկ հայությանը օգտվելու իրավունքից զրկվելու հետևանքները, քննության են առնվել հայ ժողովրդի կրած հողագույքային և ֆինանսական կորուստները, ինչպես նաև թուրքական իշխանությունների կողմից նրա զանգվածային ունեզրկման քաղաքականության առանձնահատկությունները, արժարժվել են թուր-



քական պետությանը պատասխանատվության կանչելու և այդ հանցագործության հետևանքների հաղթահարման միջազգային իրավական հնարավորությունների հարցեր: Ուսումնասիրության վերջում տրվել են Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման կառուցակարգերի վերաբերյալ գործնական առաջարկներ, որոնք ամփոփված են «Ցեղապանության հետևանքով հայ ժողովրդի կորուստների և հատուցման կառուցակարգերի մեթոդաբանական հիմքերը» կոլեկտիվ մենագրության մեջ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

## ԳԻՏԱԿԱՆ ՀՈՐԻԶՈՆՆԵՐ

## Բիլ Գեյթսի հետ կապված ստարտապը բեկումնային հաջողության է հասել արեւային էներգետիկայում

Heliogen ստարտապը, որի ներդրողներից մեկը գործարար Բիլ Գեյթսն է, հայտարարել է, որ բեկումնային հաջողության է հասել արեւային էներգիայի օգտագործման բնագավառում՝ ստեղծելով էներգետիկական կայանք, որը կարող է ջերմություն արտադրել Ցեյ-սիուսի ավելի քան 1000 աստիճանով: Այդ մասին, ինչպես տեղեկացվում է, հայտնել է CNN հեռուստաալիքը:

Ընկերությունում պարզաբանել են, որ ստեղծել են կայանք, որը բաղկացած է բազմաթիվ հայելիներից, և կառավարվում է արհեստական ինտելեկտի կողմից, ինչի շնորհիվ համակարգը կարող է բարձր ճշգրտությամբ փոխել արևի ճառագայթները ֆոկուսավորող հայելիների դիրքը և արտադրել ավելի քան 1000 աստիճանի ջերմային էներգիա, ինչը կազմում է Արեգակի մակերևույթի ջերմաստիճանի մոտավորապես մեկ հինգերորդ մասը:

Տվյալ դեպքում բեկումն այն է, որ մարդկության պատմության մեջ առաջին անգամ կուտակված արևային էներգիան կարող է օգտագործվել ցեմենտի, պողպատի, ապակու արտադրության մեջ և արդյունաբերական այլ գործընթացներում, նշում է CNN-ը: Այս «կանաչ» տեխնոլոգիան կկարողանա փոխարինել համաժողովրդի ավելի քան 1000 արտադրողներին, որոնք ջերմոցային գազեր են արտանետում մթնոլորտ, ինչն իր հերթին զգալիորեն կբարելավի բնապահպանական իրադրությունը մոլորակի վրա: Այսպես, էներգետիկայի միջազգային գործակալության տվյալներով՝ ցեմենտի արտադրության պատճառով մթնոլորտում է հայտնվում ամբողջ աշխարհում ջերմոցային գազերի արդյունաբերական արտանետումների ընդհանուր քանակի 7 տոկոսը:

Նախագծի մյուս հայտնի ներդրողների թվում, Microsoft-ի հիմնադրից բացի, տեղ է գտել միլիարդատեր և Los Angeles Times հրատարակչության սեփականատեր Պատրիկ Սինսյանը: «Բիլը և նրա թիմը իրոք սանձահարել են Արեգակը», - հայտարարել է բիզնեսմեջը CNN-ին:

Նրա խոսքով՝ նոր տեխնոլոգիան հսկայական ներուժ ունի ինչպես բիզնեսի, այնպես էլ ամբողջ մարդկության համար, հաղորդել է «Ինտերֆաքս»-ը:

## Բրիտանացի գիտնականներն ստեղծել են նոր տիպի համակարգչային հիշողություն՝ գերցածր էներգասպառմամբ

Լանքասթերի համալսարանի գիտնականներն ստեղծել ու պատենտավորել են համապիտանի համակարգչային հիշողություն, որն աշխատում է քվանտային մեխանիկայի սկզբունքներով և օժտված է ռեկորդային ցածր մակարդակի էներգասպառմամբ:

Սպասվում է, որ հայտնագործությունը կարող է փոխարինելու գալ DRAM դինամիկ հիշողության ավանդական սարքերին, որոնք այսօրվա դրությամբ օգտագործվում են համակարգիչների և ֆլեշ-կուտակիչների մեծամասնության մեջ: Նոր սարքը զուգակցում է երկու տեխնոլոգիաների առավելությունները, ներառյալ տեղեկատվության գրանցման և ընթերցման մեծ արագությունը և դրա պահպանման հուսալիությունը: Դրա հետ մեկտեղ մշակողներին հաջողվել է լուծել ավանդական հիշասարքերի խնդիրները. համակարգչային հիշողության նոր տիպի համար տեղեկատվության պահպանման ժամանակը գերազանցում է Տիեզերքի տարիքը, իսկ տվյալների գրանցումն ու հեռացումը հարյուր անգամ պակաս էներգիա կպահանջի DRAM-ի նույն այդ գործընթացների ծախսերի համեմատությամբ: Տեխնոլոգիան կօգտագործվի ժամանակակից բոլոր գաջեթներում՝ շարժական սարքերից ու անհատական համակարգիչներից մինչև սերվերներն ու «մեծ տվյալներ» պահպանման համակարգերը: Գիտնականների զննատնամերով՝ նոր տիպի համակարգչային հիշողությունը թույլ է տալիս տվյալների մշակման կենտրոններում առավելագույն էներգասպառումը նվազեցնել առնվազն 20 տոկոսով, հաղորդել է SUU-ը:

## ԷՈՒՄՈՐ



- Ի՞նչ ես կարծում, ինչպես են կազմվում հորոսկոպները:

- Պողո՛ս, դու հորոսկոպով ի՞նչ ես:

- Կարիճ:

- Հրաշալի է: Ուրեմն, ըստ հորոսկոպի եկող շաբաթ Կարիճները անպայման պետք է փակեն պարտքերը, այլապես նրանց սպառնում են մեծ ա-նախործություններ:



Մի շուն ամառանոցային հողակտորում բահով փորում է հողը: Հարևան շնիկը հմայված հայացքը չի կտրում նրանից: Շունը թողնում է փորելը և տխուր ասում է շնիկին.

- Ամեն ինչ սկսվեց նրանից, որ ես՝ հիմարս, սկսեցի հողաթափերը բերել տիրոջս:



Ամուսինը կնոջ համար գնում է աղամանդե շքեղ մի մատանի:

- Բայց, որքան ես հիշում եմ, նա քեզ խնդրել էր

նվիրել «ԶԻՓ» ավտոմեքենա,- կշտամբեց ընկերը:

- Իհարկե, ուզում էր: Իսկ ես որտեղի՞ց ճարեի կեղծված «ԶԻՓ»:



- Մեծարգո պարոն Օբամա. խնդրում եմ Ձեզ իմ զոքանչին՝ Փառանձեմ Ամտաշյանին, մտցնել «Մազմիտսկու» ցուցակի մեջ, քանի որ զոքանչիս կողմից իմ ամուսնական, մարդու և քաղաքացու իրավունքները անխնա ոտնահարվում են:



Շաբաթ օր է, առավոտյան ժամը 6-ը: Ձնգուն է հեռախոսը: Քնաթաթախ, չարացած օդեսացին վերցնում է հեռախոսափողը.

- Այո. լսում եմ:

- Ներեցեք, դա Իվանովների բնակարա՞նն է:

- Ոչ, իհարկե, ոչ: Իսկ ի՞նչ են նրանք արել ձեզ:



Դրախտ: Աղամը հարցնում է Աստծուն.

- Տեր իմ, Դու ես ստեղծել Եվային և լավ ես արել: Սակայն ինչո՞ւ ես դու նրան տվել այդպիսի գեղեցիկ աչքեր, հրաշալի մազեր և նման հմայիչ ու գերող մարմին:

- Այդ բոլորը նրա համար, որ դու նրան սիրես:

- Աստված իմ, բայց ինչո՞ւ դու նրան մեկ կաթիլ իսկ խելք չես տվել:

- Դա էլ, սիրելի Աղամ, որ նա էլ քեզ սիրի:

## Ակադեմիական նոր հրատարակություններ

1. А. Исаакян — Афоризмы.
2. С. Ованесян — Жизнь Ованеса Туманяна.
3. Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1915-1919):
4. Հեղ. Խունթ -Cilician Armenia in the parceptions of adjacent poetical entities.
5. «Զահուկյանական ընթերցումներ. Գիտական հոդվածների ժողովածու»:
6. «Լևոն Խաչիկյան. Հարյուրամյակ (ակադեմիկոս Լ. Խաչիկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հայագիտական միջազգային գիտաժողովի նյութեր)»:
7. «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը — հայագիտության արդի հիմնահարցեր», 10-րդ միջազգային գիտաժողովի նյութեր:
8. Ա. Աղասյան — Կոմիտասը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով:
9. А. Закарян — Русский композитор Фома Гартман и Комитас.
10. Յու. Սուվարյան, Վ. Սարգսյան, Ա. Սուվարյան - Հանրային կառավարման մեթոդաբանական հիմնախնդիրներ:
11. «Հայկական տնտեսագիտական հանդես», 2019 թ. № 1:

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ ԳԱՍ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ կենտրոնի հետևյալ ստորաբաժանումների ղեկավարների (լաբորատորիայի վարիչների) թափուր տեղերի համար՝**

1. Սիրտ-անոթային համակարգի գործունեությունը կարգավորող նյութերի դիզայնի և սինթեզի լաբորատորիա
2. Հակաքաղցկեղային միացությունների սինթեզի լաբորատորիա
3. Արոմատիկ միացությունների սինթեզի լաբորատորիա
4. Ֆիզիոլոգիապես ակտիվ ամինոթթուների և պեպտիդների սինթեզի ու հատկությունների ուսումնասիրման լաբորատորիա
5. Դեղաբույսերի քիմիայի լաբորատորիա
6. Հոգեմետ միացությունների սինթեզի լաբորատորիա
7. Հակաբիոտիկների սինթեզի լաբորատորիա
8. Սպիրոցիկլիկ միացությունների սինթեզի լաբորատորիա
9. Թունաբանության և քիմիաթերապիայի լաբորատորիա
10. Դեղաբանության և պատոհիստոլոգիայի լաբորատորիա
11. Ամինոմիացությունների լաբորատորիա
12. Բնական չհագեցած միացությունների լաբորատորիա
13. Ազոտային հետերոցիկլների լաբորատորիա
14. Ֆոսֆորօրգանական միացությունների լաբորատորիա
15. Կիրառական քիմիայի պրոբլեմների լաբորատորիա
16. Պոլիմերային դիսպերսիաների լաբորատորիա
17. Ազոտօրգանական միացությունների լաբորատորիա
18. Ջոմեթիմների լաբորատորիա
19. Ռենտգեն կառուցվածքային հետազոտությունների և մաս-սպեկտրոսկոպիայի լաբորատորիա
20. Օպտիկական սպեկտրոսկոպիայի լաբորատորիա
21. ՄՄՌ սպեկտրոսկոպիայի լաբորատորիա

Դիմողները պետք է ունենան գիտական աստիճան, տվյալ ոլորտում գիտական վաստակ, գիտակազմակերպչական աշխատանքի փորձ: Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում
2. Լուսանկար
3. Քաղվածք աշխատանքային գրքույկից
4. Ինքնակենսագրություն
5. Գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճեն

6. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ
7. Տեղեկանք մշտական բնակության վայրից
8. Վերջին 10 տարում հրատարակած աշխատանքների ցանկ
9. Գիտական կոչումը (եթե այն կա) հաստատող փաստաթղթի պատճեն
10. Բնութագիր վերջին աշխատանքի վայրից

Փաստաթղթերը հայտարարությունը հրատարակվելուց հետո մեկ ամսվա ընթացքում ներկայացնել հետևյալ հասցեով՝ Ազատության 26, ՀՀ ԳԱՍ ՕԴԲ ԳՏԿ (գիտական քարտուղարին) հեռ. 285291

*Գիտություն*

**Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԵԼՅԱՆ**

**Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ,**

**հեռ. 56-80-14, 077 31 63 76**

**Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:**

**Ստորագրված է տպագրության՝ 24.12.2019 թ.:**

"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА